

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ ՏԱՍՍՈՅԻ
«ԱԶՏԱՍԳՐՎԱԾ ԵՐՈՒՍԱՂԵՄ» ՊՈԵՄԻ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

ԱՇԽԵՆ ԶՐԲԱՇՅԱՆ , ԱՇՈՏ ՄԿՐՅԱՆ* 
Երևանի պետական համալսարան

Հոդվածում քննվում է 1910-ական թթ. սկզբներին Տոբկվատո Տասսոյի «Ագատագրված Երուսաղեմ» պոեմի՝ Մխիթարյանների (Արսեն Ղազիկյանի և Աթանաս Տիրոյանի) կատարած և գրեթե միաժամանակ տպագրած աշխարհաբար երկու թարգմանությունների առնչությամբ ծագած տաղադիտական և թարգմանաբանական բանավեճը: Սկզբնապես այն ծավալվում էր տաղաչափական ձևի ընտրության շուրջ, քանի որ Ղազիկյանն իր թարգմանությունը կատարել էր հայկական վանկային ոտանավորի 11-վանկանի չափով, իսկ Տիրոյանը՝ դեռևս XIX դարակեսից լայնորեն կիրառվող «հայկական չափով»: Մխիթարյան երկու թարգմանիչների միջև ծավալված այս վեճը լուծելու և խելամիտ եզրակացության հանգելու համար խնդրին մասնակից է դառնում մեկ այլ նշանավոր բանասեր՝ Հրանտ Նազարյանցը, որը նամակ է հղում Արսեն Ղազիկյանին և խնդրում շարադրել իր տեսակետները, ապա ստանալով շատ հանգամանակից և ծավալուն պատասխան՝ որոշում է ամբողջովին հրապարակել այն՝ հույս ունենալով, որ հայ բանասիրական միտքը «շահեկան ու հետաքրքրաշարժ» շատ բան կգտնի այնտեղ: Նազարյանցը դրանով ցանկանում էր շատերի ուշադրությունը հրավիրել թարգմանաբանական

* **Աշխեն Զրբաշյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի դոցենտ

Ашкен Дзрбашян – кандидат филологических наук, доцент кафедры истории армянской литературы и теории литературы ЕГУ

Ashkhen Jrbashyan – PhD in Philology, Associate Professor at YSU Chair of History of Armenian Literature and Literary Theory

Էլ. փոստ՝ ashjrbashyan@ysu.am <https://orcid.org/0000-0002-7493-352X>

Աշոտ Մկրյան – ԵՊՀ հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի ասպիրանտ, ԵՊՀ հումանիտար գիտությունների ամբիոնի դասախոս

Ашот Мкрян – аспирант кафедры истории армянской литературы и теории литературы ЕГУ, преподаватель кафедры гуманитарных наук ЕГК

Ashot Mkryan – PhD Student at YSU Chair of History of Armenian Literature and Literary Theory, Lecturer at YSC Chair of Humanities

Էլ. փոստ՝ ashot.mkryan@ysu.am <https://orcid.org/0009-0007-8881-1818>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 03.04.2025

Գրախոսվել է՝ 09.04.2025

Հաստատվել է՝ 02.06.2025

© The Author(s) 2025

կարևորագույն խնդիրների վրա, մանավանդ որ գեղարվեստական չափաձոյի թարգմանության գործն այդ ժամանակ լայնորեն ծավալվում էր ոչ միայն Մխիթարյան միաբանության շրջանակներում, այլև դրա սահմաններից դուրս: Ղազիկյանի վերլուծություններն արժեքավոր են որպես համակարգված փորձ՝ վեր հանելու թարգմանական գործընթացի առանձնահատկություններն ու թարգմանչական սխալների պատճառները: Այս տեսանկյունից նրա դիտարկումները համահունչ են XX դարի երկրորդ կեսի թարգմանության տեսության նշանավոր ներկայացուցիչների՝ Փիթեր Նյումարկի, Ջոն Քեթֆորդի, Իրժի Լևիի և այլոց մոտեցումներին:

Բանալի բառեր – *Տորկվատո Տասսո, Արսեն Ղազիկյան, Աթանաս Տիրոյան, Հրանտ Նազարյանց, «Ազատագրված Երուսաղեմ», թարգմանություն, վանկական ոտանավոր, «հայկական չափ», թարգմանական համարժեքություն, թարգմանական սխալ, թարգմանական անձնություն*

Ներածություն

1911–1912 թթ. Վենետիկի Սուրբ Ղազար կղզու տպարանում մեկը մյուսի հետևից լույս են տեսնում XVI դարի իտալական վերածննդի նշանավոր բանաստեղծ Տորկվատո Տասսոյի «Ազատագրված Երուսաղեմ» պոեմի արևմտահայ աշխարհաբար երկու թարգմանությունները: Առաջինը Արսեն Ղազիկյանի թարգմանությունն է՝ «Երուսաղեմ ազատեալ» վերնագրով, մյուսը՝ Աթանաս Տիրոյանինը՝ «Ազատումն Երուսաղեմի»: Երկու թարգմանիչներն էլ Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամներ էին: Ղազիկյանը թեև տարիքով փոքր էր Տիրոյանից, սակայն այդ շրջանում արդեն հայտնի և շատերի բարձր գնահատականին արժանացած թարգմանիչ էր. հատկապես մեծ ճանաչում ունեին Հովերոսի «Իլիական»-ի (1911) և Վերգիլիոսի «Էնեական»-ի (1910) նրա աշխարհաբար թարգմանությունները:

Այս երկու թարգմանությունների հրատարակումը առիթ է դառնում նաև լեզվաբանական ու թարգմանաբանական մի բանավեճի, որը լավագույնս արտահայտում է այդ տարիներին Մխիթարյանների շրջանում ձևավորվող նոր մտայնությունները, գրաբարի և աշխարհաբարի բնականոն պայքարը, ինչպես նաև հին ու նոր տաղաչափական սկզբունքների և պատկերացումների բնույթը: Ուրվագծվում է մի ներքին մրցակցություն և պայքար այս երկու թարգմանիչների միջև, թե ում գործն է ավելի արժեքավոր ու բնագրին հարագատ, ում թարգմանությունն է ավելի գեղեցիկ հնչում և համապատասխանում իտալական չափին, որ տարբերակն է լավագույնս հաղորդում բնագրի ընդհանուր ոգին ու գաղափարը, և այս համատեքստում արտահայտվում են հետաքրքիր դիտարկումներ ու համոզումներ:

Բանասիրական այլևայլ խնդիրներից բացի՝ բանավեճը ծավալվում էր հատկապես տաղաչափական ձևի ընտրության շուրջ, քանի որ Ղազիկյանն իր

թարգմանությունը կատարել էր հայկական վանկային ոտանավորի 11-վանկանի չափով՝ 4-4-3 կառուցվածքով, իսկ Տիրոյանը՝ դեռևս Բագրատունու հոչակած և շատ բանաստեղծների կիրառած «հայկական չափով»:

1911 թ. իր թարգմանությանը կցած «Երկու խօսք»-ում Արսեն Ղազիկյանն անդրադառնում է հենց այդ խնդրին՝ տաղաչափական ձևի ընտրությանը՝ հիշեցնելով, որ դեռ 1908-ին «Բազմավեպ»-ի համարներից մեկում տպագրելով «Էնեական»-ի թարգմանությունից մի հատված՝ խոստացել էր հանգամանալից անդրադառնալ այն հարցին, թե ինչու է «հայկական չափից» հրաժարվել հոգուտ 11-վանկանի: Ընդ որում, հարկ է նշել, որ այդ տողաչափն իրոք Ղազիկյանի աշխարհաբար թարգմանությունների նախընտրելի ձևն էր. դրանով էր նա թարգմանել ոչ միայն հին հունական և հռոմեական գրականության դասականներին՝ Հոմերոսին ու Վերգիլիոսին, այլև միջնադարյան եվրոպացի բանաստեղծների մի շարք երկեր, այդ թվում՝ Տասսոյի նշանավոր պոեմը. այդ չափը նա հետագայում նույնպես կիրառել է իր թարգմանություններում:

Արսեն Ղազիկյանի համոզմամբ՝ այնպես, ինչպես միջնադարում եվրոպացիները հրաժարվել են անտիկ պոեզիայի վեցոտնյա չափից՝ հեկզամետրից, և սկսել գործածել 11-վանկանի անհանգ տողաչափը, այդպես էլ մենք պետք է հրաժարվենք գրաբարով ստեղծված երկերի դյուցազնական չափերից և որդեգրենք այնպիսի նոր ձևեր, որոնք առավել բնորոշ են աշխարհաբարին: «Հայկական չափը ապրեր է կեանք մը գրաբարի մեջ, – գրում է նա, – ինչպես ապրեր է Յունական եւ Լատինական «վեցոտանի»ն. բայց ո՛չ արդի Յոյները եւ ո՛չ Իտալացիները «վեցոտանի»ն չեն գործածեր...»¹: Ղազիկյանը նաև օրինակներ է բերում, թե ինչպես լատիներենից կամ հին հունարենից կատարված իտալերեն թարգմանությունները XVIII–XIX դդ. կատարվել են 11-վանկանի անհանգ չափով, որն իտալերենում կոչվում է *verso sciolto* և իր հերթին համարժեք է մեր 11-վանկանիին: Համեմատելով իր և Տիրոյանի գրեթե միաժամանակ տպագրված թարգմանությունները՝ Ղազիկյանը գրում է. «Ես նախ երկար քննություններ կատարեցի երկու չափին ալ, համեմատելով երկուքին ալ տուած արդիւնքները. ինծի մետասանտոնեանը լաւագոյն թուեցաւ...»²: Եվ իբրև ապացույց իր խոսքի՝ բերում է երկու թարգմանություններից համապատասխան օրինակներ՝ ցույց տալով իր թարգմանության առավելությունները:

Աթանաս Տիրոյանն իր հերթին «Ազատումն Երուսաղեմի» թարգմանության առաջաբանում («Յառաջաբան թարգմանչին») նշում է իր ընտրած տաղաչափական ձևի առավելությունը Ղազիկյանի 11-վանկանիի նկատմամբ՝ գրելով. «Հայերենի համար իբր յարմարաւոր և պատշաճագոյն չափ ընտրեր եմ՝ դիւցազներգական յատուկ չափը, որ է բուն հայկական կոչուած քառանդամ չափը,

¹ Դորկուատոյ, Դ. (1911): Երուսաղեմ ազատեալ (թարգմանեց Հ. Արսէն Ղազարոս Ղազիկեան Մխիթարեանց): Վենետիկ – Սուրբ Ղազար. Մխիթարեան տպագրութիւն, էջ ԺԶ:

² Նույն տեղում, էջ ԺԷ:

որ.... ճշդագույն կը համապատասխանէ իտալական դիւցազնական կամ մետասանավանկ չափին, որով գրած է Տասսոյ իրեն դիւցազներգութիւնը, վասն զի այս հայկական չափով՝ կարելի է բնագրին ամբողջութիւնն ու շնորհքը պահել՝ առանց յաւելումներու կամ յապաւումներու: Իբր շոշափելի ապացոյց ըսածիս՝ կրնայ ծառայել ներկայ թարգմանութիւնս, որ տող առ տող կը հետեւի իտալական բնագրին....»³:

Միխիթարյան երկու բանասերների միջև ծավալված այս վեճը լուծելու և խելամիտ եզրահանգում անելու համար խնդրին ակամա մասնակից է դառնում մեկ այլ նշանավոր բանասեր՝ Հրանտ Նազարյանցը, որը Կ.Պոլսում ոչ միայն ճանաչված խմբագիր և գրական քննադատ էր, այլև հայերեն, իտալերեն ու ֆրանսերեն բանաստեղծությունների հեղինակ՝ քաջ ծանոթ այդ լեզուներում առկա տաղաչափական խնդիրների նրբություններին: Եվ ահա Նազարյանցը, փորձելով աշխուժացնել բանասիրական մի շատ կարևոր քննարկում և այն ներկայացնել հանրությանը, նամակ է հղում Արսեն Ղազիկյանին «իմանալու համար թե ի՛նչ էր իր հայեացքը մետասանոտեան չափին եւ Հայկականին՝ յարակից մանրամասունքով», և, ինչպես ինքն է նշում, ստանում է իր փափագածից «աւելի ստուար պատասխան մը», որն ամբողջությամբ հրատարակելու ցանկությունը չի կարողանում հաղթահարել «այն միակ մտածումով որ հայ բանասիրությունը պիտի գտնէր անոր մէջ շատ մը դրուագներ շահեկան ու հետաքրքրաշարժ»⁴:

Իսկապես, վեճը զուտ բանասիրական էր և արդեն երկար տարիներ զբաղեցնում էր շատերի միտքը. խոսքը «հայկական չափ» կոչվող բանաստեղծական ձևի մասին է, դրա կիրառությանը տարբեր ժանրերում, նպատակահարմարությանը գրաբարում և աշխարհաբարում: Սկսած 1847 թվականից, երբ Արսեն Բագրատունին ներկայացնում է քառանդամ «հայկական չափի» վերաբերյալ իր պատկերացումները և շուրջ երկու տասնամյակի ընթացքում դրանով ստեղծում գրական ու թարգմանական հարուստ ժառանգություն («Հայկ դիւցազն» պոեմը, Վիրգիլիոսի, Հոմերոսի, Միլթոնի, Սոֆոկլեսի, Ռասինի, Վոլտերի երկերի թարգմանությունները և այլ գործեր), «հայկական չափը» դառնում է գրաբարով ստեղծագործող շատ բանաստեղծների և թարգմանիչների նախընտրած տաղաչափական ձևը: Շատերը նաև փորձում էին տեսականորեն հիմնավորել, որ այդ չափը լիովին համարժեք է հին հունական և հռոմեական հեկզամետրին⁵:

³ **Տոբկուատոյ, Տ.** (1912): Ազատումն Երուսաղեմի (թարգմանեց աշխարհաբար հայկական չափով Հ. Աթանաս վ. Տիրոյեան Միխիթարեան ուխտէն): Վենետիկ. տպարան Սուրբ Ղազարու, էջ Է:

⁴ **Նազարեանց, Հ.** (1912): Դասսօ եւ իր հայ թարգմանիչները. Հ. Արսեն Ղազիկեանի նամակը առ Հրանտ Նազարեանց (նախամուտ Հրանտ Նազարեանցէ): Կ.Պոլիս. տպագրութիւն Օ. Արզուման, էջ 5: Այս գրքից հետագա բոլոր մեջբերումների էջերը կտրվեն տեքստում՝ փակագծերի մեջ:

⁵ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս **Զրբաշյան, Ա.** (2022): Տաղաչափության հարցեր: Եր., «Արմավ» հրատարակչություն, էջ 65–88:

«Հայկական չափի» նկատմամբ վերաբերմունքն էական փոփոխությունների է ենթարկվում 1890-ականներին, երբ տաղաչափական այդ ձևով սկսում են նաև աշխարհաբար թարգմանություններ կատարել: Մասնավորապես, մամուլում սուր քննադատության է արժանանում Շեքսպիրի «Մակբեթ» ողբերգության աշխարհաբար թարգմանությունը (1892), որը կատարել էր Ստեփանոս Մալխասյանցը կրկին «հայկական չափով»: «Արարատ» ամսագրի 1895 թ. Գ համարում տպագրած «Մի քանի խօսք մեր աշխարհաբարի տաղաչափության մասին» հոդվածում բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանը, ի թիվս այլ հարցերի, անդրադառնում է նաև Մալխասյանցի թարգմանությանը՝ եզրակացնելով, որ հայկական չափը հեշտ չէ գործադրել գրական նոր լեզվով. «...որքան որ դա յարմար է գրաբարին, նոյնքան էլ դժուար գործադրելի է աշխարհաբարում, մանաւանդ ռուսահայոցս գրականական լեզուում, ուր ամեն քայլափոխում հեղինակը ստիպուած պիտի լինի մեղանշելու շեշտի պայմանի դէմ...»⁶:

Եվ ահա շուրջ երկու տասնամյակ անց այս վեճը դեռ մնում էր արդիական, և հարկ կար այն թարմացնելու, քանի որ «հայկական չափը» շատերի համար դեռևս միակ ընդունելի ձևն էր համարվում դյուցազնական երկերի թարգմանություններում: Այդ կարծիքին չէր, սակայն, Հրանտ Նազարյանցը և, հրապարակելով Ղազիկյանի ծավալուն նամակը, նա կարծես փորձում էր մեկընդմիջտ լուծում տալ այս խնդրին:

Նախ, Նազարյանցը «Դասսօ եւ իր հայ թարգմանիչները» հրատարակությանը կցած «Մուտք»-ում նշում է թարգմանչի համար կարևոր առանձնահատկություններ՝ մինչև թարգմանելը խորապես ճանաչել բնագրի հեղինակին, խորամուխ լինել նրա ոգու, լեզվի, գեղարվեստական առանձնահատկությունների մեջ և հոգ տանել, «որ լեզուն ըլլար անայլալ ցոլացումը բնագրին և պահէր ջինջ ու վճիտ ներդաշնակութիւնը մեր Աշխարհաբարին» (4): Համեմատելով երկու թարգմանությունները՝ նա արտահայտում է իր անթաքույց հիացմունքը Ղազիկյանի «Երուսաղէմ ազատեալ»-ով և դժգոհում Տիրոյանի թարգմանությունից, որին, նրա բնորոշմամբ, «պակսած է ամէն բանէ առաջ տիրացումը իտալերէն լեզուի» (4), և որում կան «բազմաթիւ աղաղակող անճշդութիւններ ու սայթաքումներ» (5): Նազարյանցի եզրակացությունը հետևյալն է. «Գեղարուեստական այդ շքեղ հատորը մե՛ղք որ այսպէս խոտոր կը համեմատէր իր պարունակութեանը հետ» (5):

Միևնույն ժամանակ, Ղազիկյանի թարգմանությանը և ընդհանրապես նրա կատարած գործին Նազարյանցը տալիս է շատ բարձր գնահատական՝ գրելով. «Յանդուգն քայլ մըն էր արդարեւ գոր Ս. Ղազարու իր մենակեացի խորշին մէջ տքնող վարդապետ մը, ինքնզինքը գրաբարի լուծեն մէկէն ի մէկ թոթափած

⁶ **Հովհաննիսեան, Յ.** (1895): Մի քանի խօսք մեր աշխարհաբարի տաղաչափության մասին: «Արարատ» ամսագիր, համար Գ, էջ 86:

սկսաւ հայացընել եւ լոյս ընծայել եւրոպական գլուխ-գործոցներ որոնցմէ շատերուն գրաբար թարգմանութիւնները ատենօք մեր ժամանակակիցները հազիւ բաղդը ունեցած էին կարդալու....: Եվ եթէ շատերուս համար գրաբարը, – այլեւս դադրած գոյութեան իրատունք ունենալէ, – նկատուէր իր կրակութենէն շիջուցուած ածուխ մը, ապահովաբար այդ ածուխէն էր որ Հ. Ղազիկեան գեղագիտական հրաշալի տարրալուծութեամբ մը կերպարանեց ադամանդացումը քերթողական չափաբերուած Աշխարհաբարին....» (3–4):

Առանձին գրքույկով ամբողջությամբ տպագրելով Ղազիկյանի՝ իրեն ուղղած նամակը, ավելի ճիշտ կլինի ասել՝ բանասիրական քննությունը՝ Նազարյանցը շատերի ուշադրությունն է հրավիրում թարգմանաբանական կարևորագույն խնդիրների վրա, մանավանդ եթե հաշվի առնենք, որ գեղարվեստական չափածոյի թարգմանության գործն այդ շրջանում լայնորեն ծավալվում էր ոչ միայն Մխիթարյան միաբանության շրջանակներում, այլև դրա սահմաններից դուրս, և հայ ընթերցողի սեղանին համարժեք թարգմանություններ դնելն այդ ժամանակ խիստ արդիական խնդիր էր:

Տաղաչափության խնդիրները Արսեն Ղազիկյանի նամակում

Հղում անելով նախորդ տարի հրատարակված իր թարգմանության «Երկու խօսք»-ին և ապա դրանում արտահայտված տեսակետների վերաբերյալ Տիրոյանի հակադարձումներին՝ Ղազիկյանը փորձում է ավելի հիմնավոր ներկայացնել այն դրույթները, որոնք արդեն իսկ շարադրել էր իր նախաբանում: Նախ՝ նա կտրականապես մերժում է «հայկական չափի» և իտալական 11-վանկանիի հարազատությունը, որը Տիրոյանի հիմնական կովանն էր: Այնինչ, Ղազիկյանի խորին համոզմամբ, «հայկական չափը», որ գրաբարում լիովին համապատասխան էր հին հունական և լատինական հեկզամետրին (վեցոտնյա չափին), չի կարող պիտանի լինել նոր լեզուներից կատարված թարգմանությունների համար, քանի որ իրենց բնույթով դրանք հակադիր են: Նա անգամ վկայակոչում է Մխիթարյան ավագ սերնդի ներկայացուցիչներին՝ գրելով. «Մեր ծերունիներէն լսած եմ, որ իրենց խնդրանքին վրայ՝ Բագրատունին ձեռք առեր է Տանդէն թարգմանելու. երկար քննութիւններ է կատարեր, եւ հուսկ ըսեր է. Անկարելի է հայկական չափով թարգմանել....» (9), և անգամ Բագրատունին, որ մշակել էր այդ չափի կարևորագույն սկզբունքները, Դանտեի «Դժոխք»-ի արձանագիրը թարգմանել է 11-վանկանիով, ճիշտ է, մի փոքր այլ՝ 3–4–4 կառուցվածքով: Իսկ XVIII դարի իտալացի դրամատուրգ Վիտտորիո Ալֆիերիի պիեսներից մեկը Բագրատունին թարգմանել է արդեն 11 (4–4–3) չափով, քանի որ դրանք գրված են իտալական, այսպես կոչված, *verso scioltto*-ով՝ անհանգ 11-վանկանիով:

Ընդհանուր առմամբ Ղազիկյանը «հայկական չափին» ժխտողաբար չի վերաբերվում՝ մանավանդ հաշվի առնելով Բագրատունու անառարկելի հեղի-

նակությունը և դրանով ստեղծված բավականին պատկառելի գրաբար ժառանգությունը: Նա նաև այն համոզումն ունի, որ վարպետորեն կիրառված ցանկացած չափ կարող է իսկապես գեղեցիկ ու ներդաշնակ հնչել: Եվ եթե Բագրատունին կիրառում է «հայկական չափը», օրինակ, Միլթոնի «Դրախտ կորուսյալ»-ը անգլերենից թարգմանելիս, ապա նրա քերթվածքները «միշտ վարպետի նուրբ վրձինով են, և ոչ սկսնակի աւելի կոթով....» (13):

Տիրոջանի այն պնդումը, թե մեր «հայկական չափով» հնարավոր է թարգմանել իտալական 11-վանկանին՝ առանց հավելումների կամ կրճատումների, Ղազիկյանը փորձում է հերքել հենց նրա թարգմանությունից բերած տարբեր օրինակներով՝ ցույց տալով, թե որքան ավելորդ հավելումներ են կատարվել այդ տողաչափի մեջ միտքը տեղավորելու համար: Սակայն միևնույն ժամանակ նա հավելում է, որ վատ թարգմանության մեղքը միայն «հայկական չափինը» չէ. «....բայց և այնպես նոյն հայկական չափով կարելի էր հազար անգամ աւելի գեղեցիկ տողեր հիւսել. կը բաւէր միայն ունենալ քիչ մը արուեստ, ճաշակ և հմտութիւն հայերէն և իտալերէն լեզուներուն» (20):

Տիրոջանի մյուս մեղադրանքը, թե իբր Ղազիկյանը հետևել է միայն տողերում վանկերի թվի հավասարությանը՝ անտեսելով շեշտերը, և դրանով իսկ չի պահպանել նմանությունը իտալական շեշտավոր ոտանավորին, հերքվում են Ղազիկյանի բերած բազմաթիվ օրինակներով, որտեղ ցույց է տալիս, թե ինչպես իր բոլոր տողերում առկա են կանոնավոր շեշտեր անդամների վերջում, այսինքն՝ 4-րդ, 8-րդ և 11-րդ վանկերի վրա: Մյուս կողմից, այն պնդումը, թե Ղազիկյանի գործածած չափը լայնորեն կիրառել են նաև միջնադարում, մասնավորապես Շնորհալին, Մագիստրոսը, Երզնկացին, նույնպես անընդունելի է թարգմանչի համար, քանի որ նրանք գործածել են բացառապես քառավանկ անդամներով (8-վանկանի, 12-վանկանի) տողեր կամ այնպիսի չափեր, որոնք XIX–XX դդ. արդեն կիրառելի չեն եղել:

Անվերապահորեն պաշտպանելով իր ընտրած տաղաչափական ձևը և ցույց տալով դրա նպատակահարմարությունը իտալական դյուցազնական պոեզիան թարգմանելիս՝ Ղազիկյանը գրում է. ««Երկու խօսքիս» մեջ ըսած էի. հիմա աւելի համարձակ կերպով կրնամ ըսել թէ նոր զգեստի վրայ հին կարկտան կարելի չէ ձգել» (26): Անշուշտ, «նոր զգեստը» Ղազիկյանի համար աշխարհաբար լեզուն էր, իսկ «հին կարկատանը»՝ «հայկական չափը», որը հաջողությամբ կիրառվում էր գրաբարում: Այնինչ Տիրոջանն այն խորին համոզումն ուներ, որ լեզվի հին կամ նոր լինելը կապված չէ տաղաչափական ձևի ընտրության հետ, քանի որ «չափ կամ տաղաչափութիւն ըսուածն ալ ուրիշ բան չէ քան եթէ ներդաշնակութիւն» (26): Սակայն Ղազիկյանն այդ տեսակետը ժխտում է հիմնավոր փաստարկներով. «....բայց այդ ներդաշնակութիւնը ի՞նչպէս պիտի ծնանի. անշուշտ այս ինչ կամ այն ինչ չափով. արդ, ինչո՞ւ արդի ազգերը չեն ընդունած հին չափական վեցոտանին. որովհետեւ այդ չափով ներդաշնակութիւն յառաջ չէր գար իրենց նոր լեզուին մէջ. ինչո՞ւ համար

կ'ըսեմ ես՝ թե հայկական չափը մեր աշխարհաբարին վրայ հին կարկտան մըն է. որովհետեւ հայկական չափը ինչ ներդաշնակություն որ կը ծնուցաներ գրաբարին մեջ՝ նոյնը չի ծնուցաներ աշխարհաբարին մեջ» (27): Իսկ որո՞նք են մեր հին և նոր լեզուների այն էական տարբերությունները, որոնցով պայմանավորված են նաև դրանց տաղաչափական առանձնահատկությունները. այս հարցին նույնպես թարգմանիչը փորձում է տալ սպառնիչ պատասխան. «.....հայկական չափը գրաբարի մեջ գեղեցիկ է....., որովհետեւ կրնանք հեռացնել գոյականը ածականէն, յատկացուցիչը յատկացեալէն, յարաբերականն յարաբերեալէն, ետեւ առաջ դնել, նախդիրները կրկնել, հոլովները կարճ են, բայերը աւելի ուժեղ, ևն. ևն., որով կրնանք կորով ստեղծել. այնինչ աշխարհաբարի մեջ չենք կրնար հեռացնել, և ելած տողերը կ'ըլլան ծանրադանդաղ, թանձր, տափակ և արձակունակ, մանաւանդ եթէ ի գրիչ ճարտար չդիպիցի.....» (28):

Հետաքրքիր է, որ իր ծավալուն նամակի վերջին հատվածում Ղազիկյանը ներկայացնում է նշանավոր տարբեր բանասերների և գրողների՝ Արտաշես Հարությունյանի, Արշակ Չոպանյանի, Տիգրան Չոկյուրյանի, Թեոդիկի, Վրթանես Փափազյանի, Վարուժանի բարձր կարծիքներն ու հիացական գնահատականները իր թարգմանությունների մասին, նաև տաղաչափական իր նախընտրած ձևի առիթով: Այսպես, նա վկայակոչում է Հ. Գաբրիել Մենսիշյանի նամակը՝ հրատարակված «Բազմավեպ»-ում, որտեղ նա Ղազիկյանի ընտրած չափը համարում է շատերի համար ընդօրինակման աղբյուր: «.....Ոտանաւորի ձեւ մը ընտրած էք,– գրում է նա,– գոր՝ ինչ մեղքս պահեմ, տասնապատիկ աւելի կը նախընտրեմ ես, քան հին «հայկական չափ» անուանուածը.....: Վասնզի այն չափին շա՛տ քիչեր խելամուտ են, և գրողն ու կարդացողը միշտ կարծեաց տարբերութիւններ ունեցած են... երկրորդ, մեր գրողներէն՝ մանաւանդ նոր գրողներէն շատերը Ձեր ընտրած չափին հետեւած են: Յանկեղծ սրտէ կը շնորհատրեմ Ձեր բանաստեղծիկ գրչին յաջողութիւնը և կը մաղթեմ նորանոր երկեր...» (61):

Թարգմանության համարժեքության խնդիրները Արսեն Ղազիկյանի գնահատմամբ

Նամակի երկրորդ հատվածում (31-49) Ա. Ղազիկյանն անդրադառնում է Ա. Տիրոյանի թարգմանության անհամարժեքությանն առնչվող այլ խնդիրների՝ առանձնացնելով տարբեր «սխալներ» և «անճշդություններ»: Նա մանրամասնորեն քննում է պոեմի առաջին երգի թարգմանությունը, բնագրի համեմատությամբ վերլուծում առանձին անհամապատասխանություններ և երբեմն ներկայացնում է իր թարգմանությունը, որպեսզի առավել ընդգծի դրանց որակական տարբերությունը: Որոշ դեպքերում հայերեն սխալ թարգմանությունն իտալերենի է վերածում և առաջարկում թարգմանել՝ «անհեթեթությունը» ցույց տալու համար:

Ղազիկյանը չի սահմանում «սխալ» և «անճշդություն» հասկացությունները, սակայն հստակորեն տարանջատում է դրանք: Ըստ իր բերած օրինակների՝ պարզ է դառնում, որ «սխալ» նշանակում է կոպիտ անհամարժեքություն, որը բովանդակային կամ լեզվական առումով խեղաթուրում է բնագրի իմաստը, մինչդեռ «անճշդությունը» թարգմանչական վրիպում է, որը, հակառակ թարգմանության ընդհանուր ընկալելիությանը, չի փոխանցում բնագրի կարևոր նրբությունները:

Այսպես, սխալները կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

ա. *Իմաստային-բառային*. ընդգրկվում են այն դեպքերը, երբ բնագրի բառի կամ արտահայտության իմաստը սխալ է փոխանցվել. Ղազիկյանը ցույց է տալիս, որ շատ դեպքերում Տիրոյանը չի հասկացել բառային միավորի իմաստը: Օրինակ՝ *acquisto* – *աւանդ* (սխալ) – *ստացուածք, կալուածք, lettere di credenza* – *գաղտնի նամակներ* (սխալ) – *ընծայագիր, վկայական գիր դեսպանի, թուղթ ընծայութեան*:

բ. *Քերականական*. սրանք ձևաբանական և շարահյուսական անհամարժեքություններն են: Օրինակ՝ 32-րդ և 80-րդ ութնյակների թարգմանության մեջ Ղազիկյանը համապատասխանաբար մատնանշում է հետևյալ սխալները. «*Inspiri, imprimi, sgombri* բայերը՝ որ սահմ. ներկայ եգ. երկրորդ դեմք են՝ հրամայական կը թարգմանե, և բնագրին այնքան պարզուկ տողերէն՝ կը հանե դժոխք մը դուրս» (34), «Երկրորդ տողին մէջ երեք սխալ կայ. տէր բային *l'iniquo* – ն է. ինքը՝ *pensier* – ր՝ որ հայցական է՝ տէր բայի կ'ընէ. *concetto*, որ *concepire* բային անցեալ դերբայն է՝ որով և ածական՝ կ'ընէ գոյական, *si mal* մակբայն ալ *concetto* – յին ածական կը շալկեցնէ» (42):

Առաջին երգի (պոեմը 20 երգից է բաղկացած) թարգմանության մեջ Ղազիկյանը 40 սխալ է հաշվում (43):

Անճշտությունները կարելի է բաժանել երեք խմբի.

ա. *Հավելում (յաւելում)*. թարգմանության մեջ ավելացվել է այնպիսի տարր, որ բնագրում չկա: Օրինակ՝ առաջին ութնյակի թարգմանության մեջ, ըստ Ղազիկյանի, ««Թուրքերուն ձեռքէն» անհերթեթ յաւելուածին *Թուրքերունը*՝ կարծեմ կրնայ անձիշդ համարուիլ. *Մարակինոս* և *Թուրք* նոյն չեն...» (43): Համատեքստից հասկացվում է, որ խոսքը սարակինոսների մասին է, սակայն բնագրի տվյալ հաստատում բառը չկա:

բ. *Բացթողում (յապաւում)*. բնագրի ինչ-որ բառ կամ արտահայտություն թարգմանության մեջ բացակայում է: Օրինակ՝ 24-րդ ութնյակում, ըստ թարգմանչի, «*Sin ora* չէ թարգմանուած. յետոյ ի՞նչ կը հասկցուի այդ տողէն. ո՞ր խենթը գործ մը կ'ընէ ինքզինքը վտանգի ենթարկելու համար. իմաստն է. մինչեւ հիմա շատ յանդուգն, վտանգաւոր գործեր ըրինք, վտանգներ անցուցինք» (45):

գ. *Ոճական անհամարժեքություն*. բնագրի ինչ-ինչ ոճական առանձնահատկություններ թարգմանության մեջ չեն պահպանվել: Օրինակ՝ Ղազիկյանը գրում է, որ 59-րդ ութնյակի թարգմանության մեջ Տիրոյանը «Ապականեր է

Դասսոյի գեղեցիկ կրկնութիւնը (նման կրկնութիւններ ունին Հոմերոսն ալ, Վիրգիլիոսն ալ, որոնց թարգմանիչները չեն գեղչած զանոնք)....» (48):

Ղազիկյանը ոչ միայն մատնանշում է Տիրոյանի թարգմանության սխալներն ու անճշտությունները, այլև որոշ դեպքերում բացատրում դրանց պատճառները, որոնք պայմանականորեն կարելի է առանձնացնել հետևյալ խմբերում՝ ըստ Ի. Լևիի դասակարգման⁷. սխալներ, որոնք առաջացել են՝

ա. բառերի բազմիմաստության հետևանքով,

բ. համատեքստը չհասկանալու (սխալ մեկնաբանելու) պատճառով,

գ. հեղինակի մտահղացումը չհասկանալու, նրա լեզվառճական առանձնահատկությունները հաշվի չառնելու հետևանքով⁸:

Պատահական չէ, որ նախքան թարգմանության սխալներն ու անճշտությունները ներկայացնելը Ղազիկյանն ուշադրություն է հրավիրում «Յառաջաբան թարգմանչին»-ում Տիրոյանի հետևյալ մտքին. «Թարգմանութիւնս կատարած եմ՝ աչքի առջև ունենալով բնագրին տասնաթիւ զանազան տպագրութիւններ, հանդերձ իւրաքանչիւրին մեկնութիւններով և ձեռագիրներու և հին տպագիրներու զանազանութիւններով, և մթագոյն իմաստները պարզելով ընտիր մեկնիչներու առաջնորդութեամբ»⁹:

Հատկապէս քերականական անհամարժեքությունները ներկայացնելիս Ղազիկյանը քանիցս կասկածի տակ է դնում Տիրոյանի՝ բնագրի նրբություններին բավարար չափով տիրապետելը, և այդ պատճառով նա հաճախ վերապատմում ու մեկնաբանում է որոշ դրվագներ, որպեսզի առավել հասկանալի դարձնի թարգմանական սխալը կամ անճշտությունը. «Չէ հասկըցած. Դասսոյ ըսած էր. Պետութիւններ չի կանգներ ա՛ն՝ որ կ'ուզէ աշխարհային հիմերու վրայ գետեղել.... այլ աւեր մը կը պատրաստէ իր շէնքին (ոչ թէ աւերակ կը դառնայ, տէր բային մարդն է, մարդը ի՞նչպէս աւերակ կը դառնայ), որուն ներքեւ ճմլելով, ինք իրեն համար՝ գերեզման մը լոկ շինած պիտ' ըլլայ. այս է իմաստը» (33), կամ՝ «նախընթաց և յաջորդ տողերն այնքան պարզ են՝ որ մարդ ուզէ՝ ալ չի կրնար սխալիլ: Կուէլֆին մայրը գերմանացի է. երբ մօրը հայրը Կուէլֆ Գ. կը մեռնի, վերջնոյս երկիրները, նն. կ'անցնին իր աղջկան, Կուէլֆի մօրը, մայրն ալ իր տղուն կը ձգէ, որ կը կոչուի Կուէլֆ Դ. և այսպէս այս մեր Կուէլֆը Կուէլֆեանց մեծ տան հետ կը պատուաստի Գերման անունով և իշխանութեամբ, տէրութեամբ, երկիրներով» (35):

Տեղ-տեղ չափազանց սուր ձևակերպումներով է բնութագրում Տիրոյանի լեզվական գիտելիքները, ինչպէս՝ «Քառասուն տարիէն աւելի Իտալիա կեցող մը, որ Իտալացոց հայերէն տրվեցնելու համար Քերականութիւն ալ շինած է՝

⁷ Ավելի մանրամասն տե՛ս **Levy, J.** (2011). The Art of Translation. Amsterdam/Philadelphia: John Benjamins Publishing Company, էջ 31–47:

⁸ Ավելի մանրամասն տե՛ս **Քամայան, Ա.** (2013): Թարգմանչական սխալների հիմնական պատճառները // Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն, № 2, էջ 71–80:

⁹ **Տոբկուստոյ, Տ.** (1912): Ազատումն Երուսաղեմի, էջ է:

պետք էր զիտնար գոնէ *inspirare, sgombrare, imprimere* բայերուն հրամայականները. և տէր բային բայէն վերջ տեսնելով հրամայական չը կարծէր. գոնէ *chiamar* կատարեալը ըսելու էր իրեն. եա՛ հու, ի՞նչ կ'ընես կոր» (34), «Վերջին երեք տողերուն բայերը՝ որ ստորադասական են՝ կը թարգմանէ ներկայ. *կ'ընուինի, կու հնձեն, կու կթէ*, որպէս զի ցուցնէ թէ իտալերէն չի հասկընար կամ հայերէն չի գիտեր» (40), կամ՝ «Հայերէն լեզուն Իտալացոց ա՛յսպէս սորվեցուցեր է արդէօք» (42):

Ամփոփելով նշենք, որ Ղազիկյանի վերլուծությունն արժեքավոր է ոչ միայն որպէս կոնկրետ թարգմանության քննադատություն, այլև որպէս համակարգված փորձ՝ վեր հանելու թարգմանական գործընթացի առանձնահատկություններն ու թարգմանչական սխալների պատճառները: Այս տեսանկյունից Ղազիկյանի դիտարկումները համահունչ են XX դարի երկրորդ կեսի թարգմանության տեսության նշանավոր ներկայացուցիչների՝ Փիթեր Նյումարկի, Ջոն Բեթֆորդի, Իրժի Լևիի և այլոց մոտեցումներին:

АШХЕН ДЖРБАШЯН, АШОТ МКРЯН – *Филологические проблемы в контексте переводов поэмы Тассо «Освобожденный Иерусалим».* – В статье рассматривается стиховедческая и переводческая дискуссия, возникшая вокруг двух почти одновременно опубликованных армянских переводов поэмы Торквато Тассо «Освобожденный Иерусалим», выполненных мхитаристами в начале 1910-х годов (переводчики – Арсен Газикиан и Атанас Тироян). Первоначально обсуждение развернулось вокруг выбора метрической формы, поскольку Газикиан перевел поэму с использованием 11-сложного армянского силлабического стиха, тогда как Тироян применил «армянский размер», который широко использовался с середины XIX века. Для разрешения этого спора между двумя мхитаристскими переводчиками и достижения убедительного вывода в дискуссию вмешался известный филолог Грант Назарьянц. Он направил письмо Арсену Газикиану с просьбой изложить свои взгляды. Получив очень подробный и объемный ответ, Назарьянц решил опубликовать его полностью, надеясь, что армянская филологическая мысль найдет в нем «ценные и любопытные» идеи. Тем самым он стремился привлечь внимание к важнейшим проблемам перевода, особенно учитывая, что в этот период художественный стихотворный перевод активно развивался не только в рамках ордена Мхитаристов, но и за его пределами. Анализы Газикиана ценны как систематизированная попытка выявить особенности переводческого процесса и причины переводческих ошибок. В этом отношении его наблюдения созвучны подходам выдающихся представителей теории перевода второй половины XX века – таких, как Питер Ньюмарк, Джон Кэтфорд, Иржи Левый и другие.

Ключевые слова: *Торквато Тассо, Арсен Газикиан, Атанас Тироян, Грант Назарьянц, «Освобожденный Иерусалим», перевод, силлабический стих, «армянский размер», переводческая эквивалентность, переводческая ошибка, неточность перевода.*

ASHKHEN JRBASHYAN, ASHOT MKRYAN – *Philological Issues in the Context of Translations of Tasso's "Jerusalem Delivered".* – The article examines the metrical and translation-related debate surrounding two nearly simultaneous modern Armenian translations of Torquato Tasso's "Jerusalem Delivered," published by the Mekhitarists in the early 1910s (translated by Arsen Ghazikyan and Atanas Tiroyan). Initially, the discussion revolved around the choice of metrical form, as Ghazikyan translated the poem using the 11-syllable Armenian syllabic

verse, whereas Tiroyan employed the “Armenian meter,” which had been widely used since the mid-19th century. To resolve this dispute between the two Mekhitarist translators and reach a reasonable conclusion, another renowned philologist, Hrant Nazaryants, intervened by sending a letter to Arsen Ghazikyan, requesting him to present his views. After receiving a detailed and extensive response, Nazaryants decided to publish it in full, hoping that Armenian philological thought would find it “valuable and intriguing.” Through this, he sought to draw broader attention to key issues in translation studies, especially since the translation of artistic verse was actively developing not only within the Mekhitarist congregation but also beyond its boundaries. Ghazikyan’s analyses are valuable as a systematic attempt to uncover the specific features of the translation process and the causes of translational errors. From this perspective, his observations align with the approaches of prominent translation theorists of the second half of the 20th century, such as Peter Newmark, John Catford, Jiří Levý, and others.

Key words: *Torquato Tasso, Arsen Ghazikyan, Atanas Tiroyan, Hrant Nazaryants, “Jerusalem Delivered,” translation, syllabic verse, “Armenian meter,” translation equivalence, translation error, translational inaccuracy.*

Գրականության ցանկ

- Դորկուատոյ, Դ. (1911): Երուսաղեմ ազատեալ (թարգմանեց Հ. Արսէն Ղազարոս Ղազիկեան Մխիթարեանց): Վենետիկ – Սուրբ Ղազար. Մխիթարեան տպագրութիւն: (Dorkuatoi, D. (1911): *Yerusaghem azateal* (t’argmanets’ H. Arsen Ghazaroz Ghazikean Mkhitareants’): Venetik – Surb Ghazar. Mkhitarean t’pagrut’yun).
- Յովհաննիսեան, Յ. (1895): Մի քանի խօսք մեր աշխարհաբարի տաղաչափութեան մասին: «Արարատ» ամսագիր, համար Գ, էջ 84-90: (Hovhannisian, H. (1895): *Mi kani khosk’ mer ashkharhabari taghach’aghut’yan masin*. “Ararat” amsagir, hamar G, ej 86.)
- Նազարեանց, Հ. (1912): Դասսօ եւ իր հայ թարգմանիչները. Հ. Արսէն Ղազիկեանի նամակը առ Հրանտ Նազարեանց (նախամուտ Հրանտ Նազարեանցէ): Կ.Պոլիս. տպագրութիւն Օ. Արզուման: (Nazareants’, H. (1912): *Dassō ew ir hay t’argmanich’nerē. H. Arsen Ghazikeani namakē arr Hrant Nazareants’* (nakhamut Hrant Nazareants’ē): K. Polis: t’pagrut’yun O. Arzuman).
- Ջրբաշյան, Ա. (2022): Տաղաչափության հարցեր: Երևան, «Արմավ» հրատարակչություն: (Jrbashyan, A. (2022): *Taghach’aghut’yan harc’er*: Yerevan: “Armav” hratakch’ut’yun)
- Տորկուատոյ, Տ. (1912): Ազատումն Երուսաղեմի (թարգմանեց աշխարհաբար հայկական չափով Հ. Աթանաս վ. Տիրոյեան Մխիթարեան ուխտէն): Վենետիկ. տպարան Սուրբ Ղազարոս: (Torkuatoi, T. (1912): *Azatumn Yerusaghemi* (t’argmanets’ ashkharhabar haykakan chapov H. At’anas v. Tiroyea Mkhitarean ukht’en): Venetik: t’paran Surb Ghazaru).
- Քամալյան, Ա. (2013): Թարգմանչական սխալների հիմնական պատճառները: «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», № 2, էջ 71–80: (K’amalyan, A. (2013): *T’argmanch’akan skhalkhneri himnakan patjarnere*: Banber Yerevani hamalsarani: Banasirut’yun, № 2, ej 71–80).
- Levý, J. (2011). *The Art of Translation*. Amsterdam/Philadelphia: John Benjamins Publishing Company.